Հավելված N 3
ՀՀ կառավարության 2026 թվականի
նոյեմբերի 5-ի N 1619 - Ն որոշման

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ծրագրի երկարաժամկետ արդյունքը հայաստանյան բուհերի ինստիտուցիոնալ կարողության աճն է: Լաբորատորիաների՝ բուհերի հաշվեկշռում հաշվառվելը, ներգրավվող գիտնականների աֆիլիացիան հանրային բուհերի հետ և համատեղ հրապարակումները նպաստում են այդ բուհերի գիտական արտադրողականության և միջազգային վարկանիշային դիրքի բարելավմանը: Կարողությունների զարգացման շեշտադրումը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի և Երևանի պետական համալսարանի վրա նպատակաուղղված է Տեխնոլոգիական համալսարանի ձևավորման երկարաժամկետ տեսլականի նախապատրաստմանը:

Ծրագրի 7-րդ տարվա ավարտին սահմանվում են հետևյալ հիմնական չափելի ցուցանիշները.

NN ը/կ	**Ցուցանիշ**	**7-ամյա թիրախ**	**Մշտադիտարկման/տվյալների աղբյուր**
1.	Միջազգային գիտաժողովներ/ աշխատաժողովներ	14 միջոցառում՝ յուրաքանչյուրում միջինը 50-100 մասնակից	Հիմնադրամի/ARCS.ai-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ
2.	Միջազգային/տեղական դրամաշնորհային հայտեր	10 և ավելի հայտ	Հիմնադրամի/ARCS.ai-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ
3.	Խոշոր դրամաշնորհների ապահովում	Առնվազն 2 խոշոր դրամաշնորհ՝ հետագայում տարեկան մոտ 1 մլն ԱՄՆ դոլար և ավելի ֆինանսավորմամբ	Հիմնադրամի/ARCS.ai-ի ֆինանսավորման և ծրագրային հաշվետվություններ
4.	Գիտական հրապարակումներ	20 և ավելի հրապարակում՝ ուղղված առաջատար համաշխարհային կենտրոնների հետազոտողների վերին քառորդի ազդեցության մակարդակին	Հիմնադրամի/ARCS.ai-ի և գործընկեր բուհերի գիտական հաշվետվություններ
5.	Գյուտի արտոնագիր/ գյուտի կարճաժամկետ արտոնագիր ստանալու հայտեր կամ հաստատումներ	Առնվազն 2	Հիմնադրամի/ARCS.ai-ի և գործընկեր կազմակերպությունների հաշվետվություններ

NN ը/կ	Ցուցանիշ	7-ամյա թիրախ	Մշտադիտարկման/տվյալների աղբյուր
6.	Հետդոկտորական հետազոտողներ	12 և ավելի՝ 7 տարվա ընթացքում	Հիմնադրամի/ARCS.ai-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ
7.	Հրավիրյալ գիտնականներ և աշխարհագրական ընդգրկում	60-ից ավելի հրավիրյալ գիտնական, առնվազն 10 երկրի մասնակցություն հրավիրյալ գիտնականների ծրագրում	Հիմնադրամի/ARCS.ai-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ
8.	Մշտական գիտական հաստիքներ	3 մշտական գիտական հաստիք	Հիմնադրամի/ARCS.ai-ի մարդկային ռեսուրսների և ծրագրային հաշվետվություններ
9.	Դասավանդված դասընթացներ և բուհական ինտեգրում	90 և ավելի դասընթաց, դասընթացների ինտեգրում ՀԱՀ/ԵՊՀ/ՀԱՊՀ ուսումնական ծրագրերում	Հիմնադրամի/ARCS.ai-ի և գործընկեր բուհերի հաշվետվություններ
10.	Կրթական ընդգրկում	364 ուսանող՝ 265 բակալավրիատում, 78՝ մագիստրատուրայում և 21՝ ասպիրանտուրայում	Հիմնադրամի/ARCS.ai-ի և գործընկեր բուհերի հաշվետվություններ
11.	Հրավիրյալ և տեղական գիտնականների համագործակցության փոխակերպման ցուցանիշ	Առնվազն 50 տոկոս այն հրավիրյալ գիտնականներից, որոնք ներգրավվել են 2 տարվա ընթացքում համատեղ հրապարակում, դրամաշնորհ կամ ենթակառուցվածքային նախագիծ	Հիմնադրամի/ARCS.ai-ի ծրագրային հաշվետվություններ
12.	Ստարտափ/սփին-օֆֆ ընկերություններ	Առնվազն 5 ընկերություն	Հիմնադրամի/ARCS.ai-ի և համապատասխան գործընկերների հաշվետվություններ
13.	Ենթակառուցվածքի բեռնվածություն	Լաբորատորիաների, հաշվողական կլաստերների և GPU ռեսուրսների օգտագործման մակարդակ՝ 80% և ավելի	Հիմնադրամի/ARCS.ai-ի և ենթակառուցվածքը տրամադրող գործընկերների հաշվետվություններ

Ցուցանիշների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է N 1 հավելվածի 61-րդ կետով նախատեսված եռամսյակային հաշվետվություններում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

06.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ